

ԿԱՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ*

Ն.Գ. Խաչատրյան

Լեզվական-քերականական գիտելիքների յուրացումը զգալի չափով նպաստում է ուսանողի մտածողության զարգացմանը: Ընտրագրելով լեզվական որևէ իրողություն՝ սովորողը որոշակի վառանքով, կոնկրետ օրինակների հիման վրա կատարում է վերացարկում և ընդհանրացում՝ որանով իսկ զարգացնելով իր մտածողությունը: Մա կարևոր նշանակություն ունի ուսման մեջ առաջադիմելու գործում, որն էլ լեզվի ուսուցման կարևոր նպատակներից է:

Այստեղ մենք փորձում ենք ներկայացնել խոսքի մասերի փոխհարաբերությունների ամենաընդհանուր օրինաչափությունները և ընենել այդ երևույթը նույն և այլ խոսքի մասերի զարակնաող բառերի միջոցով: Խոսենք կապերի և այլ խոսքի մասերի հարաբերակցության և նրա ուսուցման մասին, որը կնպաստի ուսանողի ինքնուրույնության և տրամաբանական ու անողծագործական մտածողության զարգացմանը:

Թեման ուսուցանելիս բացատրում ենք, որ չեքվող խոսքի մասերի բառապաշարի կազմավորման և հարստացման հիմնական ուղին բառերի փոխանցումն է, որը կատարվում է այլ խոսքի մասերից: Փոխանցումը այն երևույթն է, երբ բառը կամ բառաձևը առանց բառակազմական միջոցի փոխում է իր խոսքիմասային արժեքը: Փոխանցման լսողում կարևոր դեր են կատարում փոխանցվող բառերի բառային իմաստը, իմաստի այս կամ այն կողմը, ինչպես նաև շարահյուսական հատկանիշը:

Ինչպես գիտենք, ժամանակակից հայերենի բոլոր կապերն առաջացել են երբեմնի նյութական իմաստ ունեցող բառերից՝ վերջիններիս նյութական նշանակության լրիվ կամ մասնակի կապի հիման վրա: Կապերն արտահայտում են բառերի ստորադասական հարաբերություններ, կազմավորվել են համապատասխան բառերի որոշակի շարահյուսական կապական կիրառությունների հիման վրա:

Կապերին հարաբերակից են այնպիսի բառեր, որոնց մեջ կա հարաբերության որոշ իմաստ, որի շնորհիվ նրանք նախադասության մեջ գործածվում են կապական առումով: Հաճախակի գործածվելով բառերի ստորադասական հարաբերություն արտահայտելու դերով՝ տվյալ բառի նախկին կիրառությունները կարող են կամ վերանալ կամ գուցահեռաբար գոյություն ունենալ ձեռք բերած խոսքիմասային նոր արժեքի հետ:

Կապական բառերը ուսուցանելիս համեմատում ենք իսկական և անիսկական կապերի հետ: Նշում ենք, որ իսկական կապերը առաասարակ չունեն նյութական իմաստ և ինքնուրույն գործածություն, հող ստանալ ու հոլովվել չեն կարող: Անիսկական կապերի մեջ գերակշռում է հարաբերության իմաստը, բայց հոլովվելով ու հող ստանալով՝ հասկացվում են նյութական նշանակությամբ:

Եվ կան «բառեր, որոնք թեև այս կամ այն չափով գործածվում են կապի դերով, բայց նրանց իմաստի մեջ իշխողը, որոշիչը նյութական իմաստն է» [1]: Այսպիսի բառերը կոչվում են կապական բառեր: Ռաբաք մի կապակցության մեջ կիրառվում են նյութական, մի այլ կապակցության մեջ՝ հարաբերության իմաստով: Հարաբերակցություններ են նկատվում գոյականի, ածականի, բայի, մակբայի, շողկապի և կապերի միջև: Այսպես՝

ա) երեմից, ժամանակ, չափ, պատվին, հասցեին, ձեռքից, ձեռքով, միջոցին, միջոցով, անունով, անունից, կողմից, գծով, պատճառով, հետևանքով, նպատակով, ընթացքին, ընթացքում, գործում (գոյական են և կապ):

բ) անկախ, համաձայն, հավասար, համապատասխան, հակառակ (ածական են և կապ):

գ) նայած, չնայած, չնայելով, չանցած, սկսած, չսկսած, հաշված, չհաշված (բայ են և կապ):

դ) առաջ, ընդառաջ, հետո, վեր, հետո. վերև, ներքև, դիմաց, շուրջ, ներս, դուրս (մակբայ են և կապ):

* Անտյանիչով՝ նշված բոլոր աշխատանքները զեկուզվել են «Երիտասարդ գիտնականների II գիտնաողություն»: Մտնիտանկերու, ասողի, 2007թ.:

ե) փոխանակ, մինչև, նախքան (շաղկապ են և կապ):

Նյութը համոզիչ դարձնելու համար գրել ենք տալիս նախադասություններ և սովորողներն ուժեղով պարզաբանում, թե տվյալ նախադասության մեջ եղած բառը ի՞նչ իմաստով է գործածված և նախադասության մեջ ի՞նչ անդամի դեր է կատարում:

Համեմատենք հետևյալ օրինակները:

Այսպես.

1. Նրա *երեսից* արյունը մարրեց:

2. Նրա *երեսից* տուժեց:

Առաջին նախադասության մեջ *երեսից* բառը նախադասության անդամ է (տոնի պարագայերով) երկրորդում *երեսից* նախադասության անդամ չէ, և չի նշանակում *երես, դեմք*: Նրա *երեսից* մեկ անդամ է:

Դասական բառերի կարող են վերածվել գոյականի և՛ ուղիղ, և թեք ձևերը: Այլ քանի որ խոսքիմասային փոխանցումները տոնի են ունենում բառերի տարբեր շարահյուսական կիրառությունների հիման վրա, բերում ենք այդ բառերի տարբեր խոսքիմասային իմաստները գործածությանը նախադասություններ:

Նյութի արդյունավետությունն ապահովելու նպատակով կազմում ենք շարքեր, որոնք կընդգրկեն այդ բառերի թեև ուղիղ, թե թեք ձևերը:

Այսպես.

Գոյական

1. Խոտհոնձի *ժամանակը* վաղուց անցել է:

2. Անպարկեշտ աղչիկների

անամոթությունը *չափ* չունի:

3. Դու կպար նրա *պատվին*:

4. Սիրահարը սրտի թրջիծով բռնեց
գեղեցկուհու *ձեռքից*:

5. Փորրիկը նկարեց մայրիկի *ձեռքով*:

6. Հիվանդը սափաված դիսնց նրա
առաջարկած *միջոցին*:

7. Բելիի առաջարկած *միջոցով*
բուժեցինք հիվանդին:

8. Նա հետևեց մերենայի *ընթացքին*:

9. Հարևանների փոխանցած *հասցեին*
կասկածեցինք:

10. Աս միշտ եպարտանում եմ այդ վեհ
ու գեղեցիկ *անունով*:

11. Նրանք զգվում են այդ *անունից*:

12. Փողոցի աչ *կողմից* երևում է տունը:

13. Մենք անցանք ճակատի առաջին *գծով*:

14. Հետևանքն է որոշվում *պատճառով*
և ոչ թե պատճառը *հետևանքով*:

15. Հպարտանում եմ նրա վեհ *նպատակով*:

Կապ

խոտհոնձի *ժամանակ*

Գյուղացիները

աշխատում են:

Նրեկոյան իր *հավաքնի* *չափ* փորրիկ յանույթ
փակելուց հետո մեր տուն էր գալիս (Ասատուր:

Մենք նրա *պատվին* ճաշկերույթ
կազմակերպեցինք:

Նրա *ձեռքից* վառվեցին:

Նրա *ձեռքով* բոլորս փորձանքի մեջ ընկանք:
Այդ միջոցին ներս մտավ:

Խոտաբույսերն *արմատների միջոցով* հողի
շերտերից կխանում են մեծ քանակությամբ
սննդանյութեր:

Նայած *իրերի ընթացքին* մենք կորոշենք
ինչպես վարվել:

Նա սկսեց սարափելիի հայեդյանքներ թափել
հետևից աղադակող շարաճճի *երեմյանների*
հասցեին:

Նրան ճանաչում են *նորոր անունով*:

Ազատամարտիկները միշտ խոսում են *նրա*
անունից:

Այդ առաջարկությունը մտցվել է *ուսուցիչների*
կողմից:

Այդ *մասնագիտության գծով* բավական
աշխատողներ եկան:

Հիվանդության սրտոնառով չմասնակցեց երեկոյին:
Թշնամու հարվածը *կասեցնելու հետևանքով*

մեր գորքը օր առաջ շարժվեց դեպի սահմանը:
Ընկերուհին մեկնեց մայրաքաղաք *սովորելու*
նպատակով:

16. Մահն իր հավերժական *ընթացքում*

չի խնայում ոչ մեկին:

17. *Գործում*՝ անընդունակ է:

Հինգ օրվա ընթացքում վերջացրեց:

Հանցագործությունը կանխելու գործում մեծ է նրա դերը:

Բացատրում ենք, որ առաջին և երկրորդ շարքերի բառերն իմաստային տարբեր խորաբերություններ են արտահայտում, և յուրաքանչյուր կատարյալ նախադասության առանձին առդամ է. առաջին շարքի նախադասություններում ընդգծված բառերը պահպանում են իրենց բնութագրական բովանդակությունը, երկրորդում ընդգծվածները զուրկ են նյութական լրացուցիչությունից և նախադասության անդամ են դառնում իրենց խնդրի հետ միասին: Երկրորդական բառերը հիմնականում գործածվում են հետադաս:

Նշում ենք, որ կապական դերով կարող են հանդես գալ նաև մի շարք ածականներ, թվականներ, մակբայներ, շարժականներ՝ և՛ նյութական, և՛ հարաբերության նշանակության լրացաբարակի դրսևորմամբ, կամ դրանցից մեկի կամ մյուսի գերակշռությամբ:

Բերում ենք գուցահեռ օրինակներ.

Ածական

1. *Անկախ* պետություն հռչակվեց:
2. Բոլորին շարել էր իրարից *հավասար* ընտանիքության վրա:
3. *Համապատասխան* օրինակներ բերեց:
4. *Հակառակ* ուղղությամբ շարժվեցին:
5. Նրանք *համաձայն* էին ամառն անց-ացնելու գյուղում:

Բայ

1. *Նայած* թերթերը դրեց սեղանին:
2. *Չնայած* գրքերը պահեց դարակում:
3. *Չնայելով շուրջը* առաջ անցավ:
4. *Չմիտած* աշխատանքներին մասին մի՛ խոսիր:
5. *Սկսած* գործը կիսատ մի՛ թողիր:
6. Ճանապարհը *չանցած*՝ վրանքի ներքով վեց:
7. *Հաշված* մատիտները հանձնեց վաճառողին:
8. *Չհաշված* տուգրականներ փակի տակ առան:

Առաջ, ընդառաջ, հետո, վեր, հետո, ներքև, վերև, դեմ, շուրջ, ներս, դուրս գոյականներից առաջացել են համապատասխան մակբայները և կապերը:

Ամենատուրմ ենք օրինակները.

Մակբայ
Հեծյալներն *առաջ* սլացան:
Ընդառաջ գնաց:

Նայեց դեպի գավիթը, *հետո* ափնի լվելով թամբի վրա՝ նայեց լույս անող

Լրաց

Անկախ այդ ամենից կիսամաճայնվի ու կգա:
Նա աշխատեց *մեզ հավասար*:

Համապատասխան գոյություն ունեցող օրենքների բոլոր գյուղացիներից հարկ են վերցնում:
Հակառակ խմբի յախանձանքին՝ Սմբատը մնաց ծոփում մի ծանրություն սրտի վրա:
Իր տվորության համաձայն՝
Արտաշեսը նույնպես հենցապալ իր սենյակից:

Կապ

Նայած տրամադրությանը՝ կկատարի այդ ամենը:
Չնայած այդ անախորժություններին՝ նրա տրամադրությունը բարձր էր:
Կնոջ աղաչանքներին չնայելով՝ շարունակեց այն:
Դեռ մրցույթը չսկսած՝ դուրս մնաց խաղից:

Մայիս ամսից սկսած՝ թաքմ մրգեր են հանվում շուկա:
Չանցած երեք ժամ՝ եկավ:

Ընդոր թերությունները հաշված՝ նա էլի մնում է լավը:

Չհաշված մի քանի թերություններ՝ աշխատանքն արժանի է բարձր գնահատման:

Լրաց

Համախառնաի *դրան առաջ* կանգնում եմ երկար:
Ձորին ընդառաջ գնացին սպարապետն ու նախարարը:
Դրանից հետո՝ նա երկար ժամանակ լուռ մնաց:

վանականին:

4. Լրամբախալու ձկները Դիլիջանի գետից մտնում էին մեր գետակը ու նրանով գնում էին *վեր*:

5. Բյուրավոր ճառագայթները գմայլելի բոցեղեն ծովից տարածվում են *հեռու* ու *հեռու*:

6. Լուսաբացին նա բարձրացավ *վերև*:

7. Իջան *ներքև*՝ ջուր խմելու:

8. Նա *դեմ*՝ կանգնեց այդ ամենին:

9. *Շուրջ* բառն տարի սպասել ենք:

10. Ես *դուրս* եմ գալիս նորից շրջելու նեղ փողոցները:

11. Խմբապետը մտավ *ներս* և խոժոռ հայացքով սկսեց գննել նրան:

Ամպերից վեր ճախրում էին:

Երկարուողող հեռու այդ քաղաքում լուր է տարածվում:

Լեռներից վերև բացվում էր հանդիսավոր նրկինքն աստղերով լցվում:

Նախրից ներքև վեց պախրա նստած որոճում էին Նեղ հունի մեջ խնդրված գետը ծառս էր լինում *ժայռերի դեմ*:

Մեղանի շուրջ պարն արդեն հանդարտվել էր:

Նրանք իրենց *գլուխից դուրս* աշխարհ չեն ճանաչում:

Դռներից ներս էր խցկել:

Այնուհետև բացատրում ենք, որ մի շարք բառեր, եթե արտահայտում են բառեր հարաբերություններ, կապեր են, եթե արտահայտում են նախադասություններ հարաբերություններ, հանդես են գալիս որպես շաղկապ:

Այսպես՝

Շաղկապ

1. *Փոխանակ* ուրախանաս, դու ինչ-որ բանի մասին ես մտածում:

2. *Մինչև* Գարեգինը կգար, նա թողեց ու գնաց:

3. *Չնայած* չէր սովորել, բայց շատ լավ պատմեց:

4. *Նախքան* դու կգայիր, զբոսաշրջիկները գնացին:

Կապ

Փոխանակ ուրախանալու՝ դու ինչ-որ բանի մասին ես մտածում:

Մինչև Գարեգինի գալը՝ նա թողեց ու գնաց:

Չնայած չսովորելուն՝ լավ պատմեց:

Նախքան քո գալը զբոսաշրջիկները գնացին:

Այսպիսով՝ սովորողը պետք է համադրելու և համեմատելու միջոցով կարողանա որոշված բառերի գործածության միջև եղած ընդհանուրը և, ճանաչելով այն, իմանա նրանց անորոշ տարբերությունը: Այս տարբերությունների պարզաբանումից էլ ուսանողները կիմանան, ինչպես բառերը դարձնել ընթացքում կարող են գրկվել նյութական իմաստից և վերած կառավարական բառերի:

Այս թեմայի յուրացումը և տեղին գործածությունը առնչվում է սովորողի տրամաբանական մտածողության խորացման հարցերին:

Գրականություն

1. Մ.Գ.Աբրահամյան, Զեյնալու խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
2. Մ.Գ.Աբրահամյան, Ն.Ա.Պատմապարտ, Ն.Ա.Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1975, էջ 476:
3. Մ.Ե.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2002:
4. Մ.Վ.Գյուլբուրադյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:

Արթուր Հ. Խայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն